«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ
19.11.2026

Կարեն Ասրյանի հիշատակին նվիրված արագ շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կարեն Ասրյանի հիշատակին նվիրված արագ շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի Երևանում (Հայաստանի շախմատի ակադեմիա, Շևչենկո 34):

Մասնակիցներ

Մասնակցության իրավունք ունեն բոլոր ցանկացողները, ովքեր ունեն ՖԻԴԵ-ի նույնականացման համար (FIDE ID): Վերջինս չունենալու դեպքում անհրաժեշտ է FIDE ID –ն ձեռք բերել՝ այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք՝ գրանցվել բաժին (https://www.chessfed.am/am/fide-registration-form):

Մրցաշարում հաշվարկվելու է արագ շախմատի միջազգային վարկանիշ:

Ժամանակացույց

Մրցաշարը կանցկացվի նոյեմբերի 29-ից 30-ը:

Մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով՝ 9 խաղափուլով:

Խաղափուլ / ամսաթիվ	ժամ
1-ին խաղափուլ նոյեմբերի 29	16:00
2-րդ խաղափուլ նոյեմբերի 29	16:40
3-րդ խաղափուլ նոյեմբերի 29	17:20
4-րդ խաղափուլ նոյեմբերի 29	18:00
5-րդ խաղափուլ նոյեմբերի 29	18:40
6-րդ խաղափուլ նոյեմբերի 30	16:00
7-րդ խաղափուլ նոյեմբերի 30	16:40
8-րդ խաղափուլ նոյեմբերի 30	17:20

9-րդ խաղափուլ նոյեմբերի 30	18:00

Ժամակարգ

10 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորների դեպքում տեղերը կորոշվեն ըստ՝

1. Հատված Բուհգոլցով
2. Բուհգոլցով
3. Սև գույնով խաղացած պարտիաների քանակով
4. Անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքով
5. Հաղթանակների առավելագույն քանակով:

Մրցանակներ

Մրցանակային ֆոնդը կազմում է 200 000 դրամ:

1-ին տեղ	60 000	Լավագույն 50+ մասնակից	10 000
2-րդ տեղ	40 000	Կանանց լավագույն մասնակից	10 000
3-րդ տեղ	30 000	Լավագույն մինչև 16տ. մասնակից	10 000
4-րդ տեղ	20 000		
5-րդ տեղ	20 000		

**Մրցանակները չեն կիսվելու և հարկվելու են ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն:*

Մրցաշարում 1-3-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները իրավունք կստանան մասնակցելու Կարեն Ասրյանի հիշատակին նվիրված եզրափակիչ մրցաշարին, որը կանցկացվի շրջանային մրցակարգով՝ 10 մասնակիցներով: 2026 թվականի դեկտեմբերի 18-ին՝ Հայաստանի շախմատի ակադեմիայում առաջին 3 լավագույնները հնարավորություն կունենան մրցելու արագ շախմատի միջազգային վարկանիշային աղյուսակից իրենց մասնակցությունը հաստատած Հայաստանի առաջատար 7 շախմատիստների հետ:

Եզրափակչի **մրցանակային ֆոնդը կազմում է 800,000 ՀՀ դրամ:**

Կիսաեզրափակչի գրանցման վերջնաժամկետը՝ նոյեմբերի 28, ժամը 18:00:

Գրանցվել կարող եք միայն այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք, գրանցվել բաժին՝ հետևյալ հղմամբ

https://www.chessfed.am/am/tournaments/registration

Մուտքավճար 5000 ՀՀ դրամ:

Մուտքավճարից ազատված են՝

- Գրոսմայստերները/կանանց գրոսմայստերները
- Միջազգային վարպետները/կանանց միջազգային վարպետները

Հարցերի դեպքում զանգահարել՝ **+374 99 440105**